

378(47.925)

6-81

40p

06 APR 2010



863/14

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՆՈՆԵՐ
ՅԵՎ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՐԱԳՐԵՐ

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
1940 ԹՎԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Апр.

3-4797a

378(47.925)

6-81

ԿԱՆՈՆԵՐ

ՅԵՎ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԾՐԱԳՐԵՐ

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
1940 ԹՎԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ИHB. № 17154

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1940




11 0 APR 2013


54.555

Տեխ. խմբագիր՝ Զ. Մաբուխյան
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Բաբայան
Գլավխիտի լիպոյր՝ Ե.—1360. Պատվեր №387, 1000:

Պետհամալսարանի Հրատարակչության տպարան, Յերևան, Արմավիր, 104.



253-87



Յերևանի Պետական Համալսարանի շենքը

ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՃԱՌԸ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԳՊՐՈՑԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՐԵՄԼՈՒՄ ՏԵՂԻ
ՈՒՆԵՑԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆԸ

1938 թ. մայիսի 17-ին

Ընկերներ:

Թույլ տվեք առաջարկել գիտության կենացը, նրա ծաղկման կենացը, գիտության մարդկանց կենացը:

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, վորը չի պարսպվում ժողովրդից, իրեն հեռու չի պահում ժողովրդից, այլ պատրաստ է ծառայելու ժողովրդին, պատրաստ է ժողովրդին հաղորդելու գիտության բոլոր նվաճումները, վորը սպասարկում է ժողովրդին վոչ թե հարկադրաբար, այլ կամավոր կերպով, հաճույքով: (Մափաճառաբայություններ):

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, վորն իր հին ու ճանաչված ղեկավարներին թույլ չի տալիս խնդնագոհ կերպով պարփակվել գիտության քուրմերի կեղևի մեջ, գիտության մոնոպոլիստների կեղևի մեջ, վորը հասկանում է գիտության յերիտասարդ աշխատողների հետ գիտության հին աշխատողների դաշինքի իմաստը, նշանակությունը, ամենազորությունը, վորը գիտության բոլոր դռները կամավոր կերպով ու հաճույքով բաց է անում մեր յերկրի յերիտասարդ ուժերի առաջ և նրանց հնարավորություն է տալիս նվաճելու գիտության բարձունքները, վորն ընդունում է, վոր ապագան պատկանում է գիտության յերիտասարդությանը: (Մափաճառաբայություններ):

Գիտության ծաղկման կենացը, այն գիտության, վորի մարդիկ, հասկանալով գիտության մեջ հաստատված տրագիցիաների ուժն ու նշանակությունը և դրանք հմտորեն ոգտագործելով ի շահ գիտության, այնուամենայնիվ չեն ուզում լինել այդ տրա-

դիցիաների ստրուկները, վորն ունի հին տրադիցիաները, նորմա-
ները, դիրքավորումները փշրելու համարձակություն, վճռակա-
նություն, յերբ դրանք դառնում են հնացած, յերբ դրանք արգե-
լակի յեն վերածվում առաջխաղացման համար, և վորը կարողա-
նում և ստեղծել նոր տրադիցիաներ, նոր նորմաներ, նոր դիրքա-
վորումներ: (Մափառություններ):

Գիտությունն իր զարգացման մեջ ճանաչում և վոչ պակաս
քաջարի մարդիկ, վորոնք կարողանում եյին փշրել հինը և ստեղ-
ծել նորը, չնայած ամեն տեսակ խոչընդոտներին, հակառակ ամեն
բանի: Գիտության այնպիսի քաջարիներ, ինչպես Գալիլեյը,
Դարվինը և շատ ուրիշները, հանրածանոթ են: Յես կուզեյի կանգ
առնել գիտության այդպիսի կորիֆեյներէից մեկի վրա, վորը
միևնույն ժամանակ հանդիսանում և մեր ժամանակի մեծագույն
մարդը: Յես նկատի ունեմ Լեյնիցին, մեր ուսուցչին, մեր դաստիա-
րակին: (Մափառություններ): Հիշեցեք 1917 թիվը: Ռուսաս-
տանի հասարակական զարգացման գիտական անալիզի հիման
վրա, միջազգային դրության գիտական անալիզի հիման վրա
Լեյնինն այն ժամանակ յեկավ այն յեզրակացության, վոր դրու-
թյունից միակ յեղքը հանդիսանում և սոցիալիզմի հաղթանակը
Ռուսաստանում: Այդ ամիսի քան անսպասելի յեզրակացություն
եր այն ժամանակվա գիտության շատ մարդկանց համար: Պլե-
խանովը, գիտության աչքի ընկնող մարդկանցից մեկը, այն
ժամանակ արհամարհանքով եր խոսում Լեյնինի մասին՝ պնդելով՝
թե Լեյնինը գտնվում և «զառանցանքի մեջ»: Գիտության այլ,
վոչ պակաս հայտնի մարդիկ պնդում եյին, թե «Լեյնինը խելա-
գարվել է», թե նրան հարկավոր և թագցնել վորևէ հեռու տեղ:
Այն ժամանակ Լեյնինի դեմ վոռնում եյին գիտության բոլոր ու
ամեն տեսակ մարդիկ, վորպես մի մարդու, վորը քանդում և գի-
տությունը: Բայց Լեյնինը չվախեցավ հոսանքին դեմ գնալուց,
քարացածությանը դեմ գնալուց: Յեմ Լեյնինը հաղթեց: (Մափա-
ռություններ):

Ահա ձեզ գիտության քաջարի տիպարը, վոր համարձակորեն
պայքար և մղում հնացած գիտության դեմ և ճանապարհ և հար-
թում նոր գիտության համար:

Այնպես ել և լինում, վոր գիտության ու տեխնիկայի նոր
ուղիներ յերբեմն հարթում են գիտության մեջ վոչ հանրածանոթ
մարդիկ, այլ գիտական աշխարհում միանգամայն անհայտ մար-
դիկ, հասարակ մարդիկ, պրակտիկները, գործի նորարարները: Այս-

տեղ ընդհանուր սեղանի շուրջը նստած են ընկերներ Ստախանովը
և Պապանինը: Մարդիկ, վորոնք գիտական աշխարհում անհայտ
են, վորոնք չունեն գիտական աստիճաններ, իրենց գործի պրակ-
տիկներն են: Բայց հիւս հայտնի չե, վոր Ստախանովը ու ստա-
խանովականները արդյունաբերության ասպարիզում իրենց գործ-
նական աշխատանքում դեն չպրտեցին, վորպես հնացած, գոյու-
թյուն ունեցող այն նորմաները, վորոնք սահմանվել եյին գիտու-
թյան ու տեխնիկայի հայտնի մարդկանց կողմից, և մտցրին նոր
նորմաներ, վորոնք համապատասխանում են իսկական գիտության
ու տեխնիկայի պահանջներին: Ո՞ւմ հայտնի չե, վոր Պապանինն
ու պապանինականները դրեյֆող սառցադաշտի վրա կատարած
իրենց գործնական աշխատանքով անցողակիորեն, առանց հատուկ
դժվարության, դեն չպրտեցին Արկտիկայի մասին յեղած հին
պատկերացումը վորպես հնացած և սահմանեցին նորը, վորը հա-
մապատասխանում և իսկական գիտության պահանջներին: Ո՞վ
կարող և ժխտել, վոր Ստախանովը և Պապանինը նորարարներ են
գիտության մեջ, մեր առաջավոր գիտության մարդիկն են:

Ահա թե ել ինչպիսի «հրաշքներ» են լինում գիտության մեջ:

Յես խոսեցի գիտության մասին: Բայց լինում և ամեն տե-
սակ գիտություն: Այն գիտությունը, վորի մասին յես խոսեցի,
կոչվում և ԱՌԱՋԱՎՈՐ գիտություն:

Մեր առաջավոր գիտության ծաղկման կենացը:

Առաջավոր գիտության մարդկանց կենացը:


Լեյնինի և լեյնինիզմի կենացը:

Ստախանովի և ստախանովականների կենացը:


Պապանինի և պապանինականների կենացը: (Մափառու-
թյուններ):

«Խորհրդային Սոցիալիսական Հանրապետությունների Միության Սահմանադրության 121-րդ հոդվածի համաձայն բարձրագույն ուսումնական հաստատություններն իրագործում են ԽՍՀ Միության բոլոր քաղաքացիների կրթության իրավունքը և նպաստել ունեն պատասելու առաջավոր գիտությունը և տեխնիկային տրամադրելու ընդունակ, գիտական սոցիալիզմի գիտելիքներով զինված, խորհրդային հայրենիքը պաշտպանելու պատրաստ և կոմունիստական հասարակության կառուցման գործին անձնուրացաբեռն մվիրված կադրեր»:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ՏԻՊԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՑ



Համալսարանի Մաթեմատիկոս-ֆիզիկոսի կաբինետը



Յերևանի Պետական Համալսարանի հանրակացարանի մի կորպուսը

Յերևանի Պետական համալսարանը, ԽՍՀՄ համալսարաններին մեկը լինելով, հանդիսանում է Հայկական ԽՍՀ կենտրոնական և խոշորագույն բարձրագույն ուսումնական հաստատությունը:

Համալսարանն ունի ութ ֆակուլտետ հետևյալ մասնագիտություններով՝

ՖԱԿՈՒԼՏԵՏ

1. Փիզիկո-մաթեմատիկական

2. Քիմիական

3. Գեոլոգ.-աշխարհագրական

4. Բիոլոգիական

5. Ֆիլոլոգիական

6. Պատմության

7. Տնտեսագիտական

8. Իրավաբանական

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մաթեմատիկա

2. Ֆիզիկա

3. Աստղաբաշխություն

4. Մեխանիկա

1. Անորգանական և անալիտ. քիմ.

2. Որգանական քիմիա

1. Գեոլոգիա

2. Աշխարհագրություն

1. Բուսաբանություն

2. Կենդանաբանություն

1. Հայոց լեզու և գրականութ.

2. Ռուս. լեզու և գրականութ.

3. Արևմտյան լեզուների և գրականութ.

4. Արևելյան լեզուների և գրականութ.

1. Պատմություն

1. Սոցիալիստական արդյունաբերության եկոնոմիկան և պլանավորումը

2. Սոց. գյուղատնտեսության եկոնոմիկան և պլանավորումը

3. Պորհ. առևտրի եկոնոմիկան

4. Ֆինանսներ

5. Վիճակագրություն

1. Իրավաբանական գիտություններ

Ֆակուլտետներն ապահովված են կահավորված լաբորատորիաներով, կաբինետներով, արհեստանոցներով, վորտեղ ուսանողները զարգացնում են իրենց ունակությունները, զբաղվելով ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքներով:

Ուսանողները ինքնուրույն աշխատանքներին մեծ ուսանողական կուլթյուն են ցույց տալիս համալսարանի հարուստ գրադարանը, ուսանողական համար բացված ընթերցարանը և հաճախակի կազմակերպվող ուսանողական գիտական կոնֆերանսները:

Մասնագիտության մեջ խորանալու համար կարևոր տեղ է գրավում ուսանողների արտագրական և մանկավարժական պրակտիկան: Համալսարանն ապահովված է արտագրական պրակտիկայի վայրերով ՀԽՍՀ-ում և Միություն կենտրոններում:

Համալսարանում գոյություն ունեն ուսանողական գիտական և գրական մի շարք խմբակներ, գոյություն ունեն նաև ինքնագործ խմբակներ (յերգեցիկ, յերաժշտական ու թատերական), ինչպես նաև „Hayka“ ֆիզիկուլտ կազմակերպություն: Համալսարանի մեծ դահլիճում ուսանողական համար կազմակերպվում են կինոսեանսներ, համերգներ և այլն:

Համալսարանն ապահովված է բարձրորակ պրոֆեսորա-դասախոսական կազմով: Համալսարանին կից գոյություն ունի ասպիրանտուրա, վորը հանդիսանում է պրոֆեսորա-դասախոսական կադրեր և գիտական կադրեր պատրաստելու հիմնական ձևերից մեկը:

Ասպիրանտուրա յեն ընդունվում բարձրագույն դպրոց ավարտողներից նրանք, վորնք ընդունակություններ են հայտնաբերում, թե իրենց գիտահետադոտական և թե մանկավարժական աշխատանքների մեջ:

Համալսարանն ունի հանրակացարան:


ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմության ֆակուլտետը պատրաստում է պատմության գիտելիքներից բազմակողմանի կրթություն ստացած վորակյալ կադրեր, գիտական աշխատողներ և դասատուներ:

Շրջանավարտ ուսանողները պետական քննությունները հանձնելուց հետո ստանում են պատմաբանի կոչում:


Ուսման տեվողությունն է 5 տարի: Ուսման 4-րդ և 5-րդ կուրսերում ուսանողներն անցնում են հատուկ կուրսեր և սեմինարներ, հետևյալ ամբիոնների գծով.

- 1) Հայ ժողովրդի պատմության,
- 2) ԽՍՀՄ ժողովուրդների պատմության,
- 3) Հին աշխարհի պատմության,



Ուսանողները կենտրոնական գրադարանում:

ընդամենը լիցքը գտնվում էր Երևանի Կոմիտեի տարածքում:



4) Միջին դարերի և նոր պատմութեան:

Պատմութեան ֆակուլտետն ավարտողները կարող են աշխատել հանրապետութեան գիտահետազոտական հաստատութիւններում (Գիտութիւնների Ակադեմիայի հայկական ֆիլիալի՝ պատմութեան ինստիտուտում, արխիւներում, Պատմութեան թանգարանում, Կուսպատ. ինստիտուտում, Մատենադարանում), վորպես գիտական աշխատակիցներ, լրիվ միջնակարգ դպրոցներում, վորպես պատմութեան դասատուներ, իսկ ասպիրանտուրան ավարտելուց հետո՝ ԲՈՒՀ-երի դասախոսներ:

ՖԻԼՈՍՈՓԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ունի չորս բաժին—ա) հայոց լեզվի և գրականութեան,

բ) ռուսաց լեզվի և գրականութեան,

գ) արևմտա-յեւրոպական լեզուների և գրականութեան:

դ) Արևելյան լեզուների և գրականութեան:

Բոլոր բաժիններում ուսման տեւողութիւնը հինգ տարի յի:

Հայոց լեզվի և գրականութեան բաժինը պատրաստում է հայոց լեզվի և գրականութեան մասնագետներ:

Ռուսաց լեզվի և գրականութեան բաժինը պատրաստում է ռուսաց լեզվի և գրականութեան մասնագետներ: Դասավանդումն այս բաժնում (բոլոր առարկաներից) տարվում է ռուսերեն լեզվով:

Արևմտա-յեւրոպական լեզուների և գրականութեան բաժինը պատրաստում է յեւրոպական վորեւ լեզվի (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ըստ ընտրութեան) և յեւրոպական գրականութեան մասնագետ:

Արևելյան լեզուների և գրականութեան բաժինը պատրաստում է արևելյան լեզուների (արաբերեն, պարսկերեն, վրացերեն, ադրբեջաներեն) և գրականութեան մասնագետներ:

Շրջանավարտ ուսանողները պետական քննութիւնները հանձնելուց հետո ստանում են ֆիլոզոֆի կոչում և կարող են աշխատել գիտահետազոտական հիմնարկներում, թանգարաններում, գրադարաններում, զբաղվել գրական աշխատանքներով, ընդունվել ասպիրանտուրա և դասավանդել լրիվ միջնակարգ դպրոցներում: Բոլոր բաժիններն ապահովված են կաթինետներով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատրաստում ե դատական և դատախազական ֆրոնտում աշխատող վորակյալ կադրեր: Իրավաբանական ֆակուլտետ ավարտողները կարող են աշխատել ներքոհիշյալ բնագավառներում՝

1. Դատական ապարատում՝

- ա) Արդիփոքիմատի բաժնի վարիչներ,
- բ) Գերագույն դատարանի անդամներ,
- գ) Ժողդատավորներ:

2. Դատախազության ապարատում՝

- ա) Հանրապետական դատախազության բաժնի դատախազներ,
- բ) Դատախազներ,
- գ) Ժող. քննիչներ:

3. Պետական նոտարիատում՝ իբրև պետական նոտարներ:

4. Պետական արբիտրաժի ապարատում՝ իբրև պետական արբիտրաժներ:

5. Դատապաշտպանների կոլեգիայում՝ իբրև կոլեգիայի անդամ դատապաշտպաններ:

6. Տնտեսական հիմնարկներում՝ իբրև հիմնարկության իրավախորհրդատուներ:

Փակուլտետում ուսման տևողությունն է 4 տարի և ֆակուլտետին կից կա իրավաբանական կաբինետ:


Փակուլտետի գերազանց ավարտողներին տրվում է առաջնություն ասպիրանտուրայում սովորելու համար:

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ


Ուսման տեվողությունը $4\frac{1}{2}$ տարի յե: Ունի չորս բաժին՝ առևտրա-տնտեսագիտական, ֆինանսա-տնտեսագիտական, ժողտնտեսաշխուժման և ժողտնտալանավորման (արդյունաբերության և գյուղատնտեսության դժով):

1. Առևտրա-տնտեսագիտական բաժինը պատրաստում է խորհրդային առևտրի բարձրորակ տնտեսագետներ: Ավարտողները կարող են աշխատել Առևտրի ժողկոմատի և Հայկոնպի ցանցում:

2. Ժողովրդական տնտեսության հաշվառման բաժինը պատ-



Մտղվիմոի ողիտրիտու վոլոմոնորաշ



բաստում ե բարձրորակ տնտեսագետ-վիճակագիրներ սոցիալիստական արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան գծով:

3. Ֆինանսա-տնտեսագիտական բաժինը պատրաստում ե բարձրորակ տնտեսագետ-ֆինանսիստներ: Ավարտողները կարող են աշխատել ֆինոթղկումատի և Պետական բանկի սիստեմներում:

4. Ժողտնտայլանավորման բաժինը պատրաստում ե բարձր վորակի տնտեսագետ-պլանավիկներ սոցիալիստական արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան գծով:

Սոցիալիստական արդյունաբերութեան գծով ավարտողները կարող են աշխատել՝

Պետպլանում,

Արդյունաբերական ժողկոմատներում,

Քաղաքային պլանբաժիններում,

Պոշոր արդյունաբերական ձեռնարկությունների պլանային բաժիններում,

Սոցիալիստական գյուղատնտեսութեան գծով ավարտողները՝

Հողժողկոմատի պլանային և մյուս բաժիններում:

Շրջխորհուրդների գործկոմիների պլանային բյուրոներում, շրջհողբաժիններում,

Մեքենատրակտորային կայաններում և

Պորհրդային տնտեսություններում:

Շրջանավարտ ուսանողները պետական քննությունները հանձնելուց հետո ստանում են տնտեսագետի կոչում ըստ մասնագիտութեան:

Դերագանցիկի դիպլոմով ավարտող ուսանողներն առաջին հերթին են գործուղվում ասպիրանտուրա:

ՖԻԶԻԿՈՎ-ՄԱՔԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ունի յերկու բաժին՝ ֆիզիկո-մաթեմատիկական-աստղաբաշխութեան և մեխանիկայի մասնագիտություններով:

Ֆակուլտետը պատրաստում ե բարձրորակ ֆիզիկոսներ, մաթեմատիկոսներ, աստղաբաշխներ և մեխանիկներ: Ֆակուլտետն ավարտողները կարող են աշխատել՝

գիտահետազոտական հիմնարկներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, վորպես ասիստենտներ, լրիվ միջնակարգ դպրոցներում և տեխնիկումներում, վորպես դասատուներ:

Ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետը լավագույն կերպով ավարտողներն ընդունվում են համալսարանին կից ասպիրանտուրան:

Ուսման տեվոդությունը հինգ տարի յե:

Ֆակուլտետն ունի ընդհանուր ֆիզիկայի, ոպտիկայի և ելեկտրո-ռադիո-ակուստիկայի լաբորատորիաներ:

Շրջանավարտ ուսանողները պետական քննությունները հանձնելուց հետո ստանում են՝ մաթեմատիկական բաժնի գծով— մաթեմատիկոսի կոչում, ֆիզիկական բաժնի գծով— ֆիզիկոսի կոչում, աստղաբաշխական բաժնի գծով— աստղաբաշխի կոչում:

ՔԻՄԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Քիմիական ֆակուլտետը պատրաստում է բարձրորակ մասնագետներ՝ անօրգանական, անալիտիկ և օրգանական քիմիայի գծով:

Ուսման տեվոդությունը հինգ տարի յե:

Ֆակուլտետն ավարտողը ստանում է քիմիկոսի կոչում: Շրջանավարտները կարող են աշխատել հանրապետության գիտահետազոտական ինստիտուտներում և հիմնարկներում, արդյունաբերական լաբորատորիաներում՝ վորպես գիտական աշխատակիցներ, ԲՈՒՀ-երում՝ վորպես ասիստենտներ, տեխնիկոմներում և լրիվ միջնակարգ դպրոցներում՝ վորպես դասատուներ: Լավագույն շրջանավարտները կարող են ընդունվել ասպիրանտուրա: Ֆակուլտետին կից կան սարքավորված մի շարք քիմիական լաբորատորիաներ:

ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ


Բիոլոգիական ֆակուլտետը պատրաստում է կենդանաբանության և բուսաբանության գծով բարձրորակ մասնագետներ:

Բիոլոգիական ֆակուլտետի լավագույն շրջանավարտներն ընդունվում են համալսարանին կից ասպիրանտուրան:


Շրջանավարտ բիոլոգները կարող են աշխատել ԲՈՒՀ-երում և գիտահետազոտական ինստիտուտներում, լաբորատորիաներում, գիտ. կայաններում և լինել դասատուներ լրիվ միջնակարգ դպրոցներում ու տեխնիկոմներում:

Բիոլոգիական ֆակուլտետն ունի սարքավորված ու կահավորված՝


կենդանաբանական,



Գոյնառումով պատկերված Գյումրու համալսարանի ֆակուլտետները







կենդանիների ֆիզիոլոգիայի,
բույսերի մորֆոլոգիայի ու սիստեմատիկայի և
բույսերի ֆիզիոլոգիայի լաբորատորիաներ:

ԳԵՈՒՈԳԻԱԿԱՆ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ֆակուլտետն ունի յերկու բաժին՝ գեոլոգիական և աշխարհագրական: Գեոլոգիական բաժինը պատրաստում է բարձրորակ գեոլոգներ, աշխարհագրականը՝ ֆիզիկական և տնտեսական աշխարհագրությունների բարձրորակ մասնագետներ:

Ուսման տեվոդությունը յուրաքանչյուր բաժնում 5 տարի յն:

Ֆակուլտետն ավարտողները կարող են աշխատել միութենական և հանրապետական գիտահետազոտական հիմնարկներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, լրիվ միջնակարգ դպրոցներում և տեխնիկումներում: Լավագույն շրջանավարտները կարող են ընդունվել ասպիրանտուրա:

Ֆակուլտետին կից գոյություն ունեն աշխարհագրական կաբինետ, միներալոգիայի, պետրոգրաֆիայի և հովազիտական լաբորատորիաներ, ինչպես նաև քարտեզագրական արհեստանոց:

1940 թվին ԽՍՀ ՄԻՂԻՅՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվում են ԽՍՀ Միություն 17-ից մինչև 35 տարեկան յերկուսեռի քաղաքացիները, վերոնշյալ ուսանողները լրիվ միջնակարգ կրթություն (տասնամյակ, բանֆակ, տեխնիկում, ուսումնարան, մեծահասակների միջնակարգ դպրոց, միջնակարգ բժշկական դպրոց, տասնամյակի ծրագրի ծավալ ունեցող ռազմական դպրոցներ), կամ վերոնշյալ երեսներն կարգով ստացել են միջնակարգ դպրոցի ավարտական վկայական:

Մանրամասնում.— ա) Այն անձանց, վերոնշյալ 2-րդ աստիճանի դպրոցը (9-ամյակ), կամ ՌԽՍՀ և ԲՍՀ յեռամյա արհեստագիտական դպրոցները՝ 7-ամյակի բաղադրյալ վրա ավարտել են մինչև 1935 թ., թույլատրվում է մասնակցել ԲՈՒՀ-երի ընդունելության քննություններին միջնակարգ դպրոցներն ավարտողների հետ հավասարապես:

բ) Տեխնիկում, միջնակարգ բժշկական դպրոց, ուսումնարան ավարտածներին թույլատրվում է մասնակցել արտագրությունից կտրված բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննություններին, յիթե միայն նրանք ունեն որենքով սահմանված 3 տարվա արտագրական ստաժ: Այն անձինք, վերոնշյալ միջնակարգ բժշկական դպրոցի ծավալով վերջացրած կրթություն և իրենց մասնագիտությունից յերեք տարվա զործնական աշխատանքի ստաժ, ԲՈՒՀ-երն ընդունվում են ընդհանուր հիմունքներով:

Հիշված ստաժը չի պահանջվում այն անձնավորություններէրէց, վերոնշյալ ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թվի սեպտեմբերի 15-ի վերոշման համաձայն մտնում են յուրաքանչյուր տեխնիկումի շրջանավարտների 50%-ի մեջ և նրանցից, վերոնշյալ մտնում են յերեկոյան բաժին:

Թերի բարձրագույն կրթություն ունեցողներին թույլատրվում է մասնակցել ընդունելության քննություններին ընդհանուր հիմունքներով, յիթե նրանք ունեն միջնակարգ դպրոցի ավարտական վկայական սույն հոդվածի համաձայն:

Ուսումնարան ավարտածները համարվում են ԽՍՀՄ-ի այն քաղաքացիները, վերոնշյալ ուսանող տեխնիկական, մանկավարժական, գեղարվեստական, յերաժշտական և թատերական ուսումնարանների ավարտական վկայական:

2. Բարձրագույն ուսումնական հաստատությունները մտնող բոլոր անձինք, բացառությամբ 5-րդ կետում նշվածների, յենթարկվում են ընդունման քննությունների հետևվյալ առարկաներից.

ա) Ռուսաց լեզու (գրավոր շարադրություն, քերականություն, գրականություն): Այն բարձրագույն ուսումնական հաստատություններում, վերտեղ դասավանդումը տարվում է այլ լեզուներով, անց է կացվում նաև քննություն այն լեզվից, վերով տեղի յե ունենում դասավանդումը տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում:

բ) ԽՍՀՄ Ժողովուրդների պատմություն և ԽՍՀՄ Սահմանադրություն,

գ) Մաթեմատիկա,

դ) Ֆիզիկա,

յե) Քիմիա,

զ) Վերևե մեկ ոտար լեզվից—անգլերեն, գերմաներեն կամ ֆրանսերեն—ընդունվողի ընտրությամբ:

Գյուղատնտեսական, պատմական և լեզվագրական, իրավաբանական, տնտեսագիտական և աշխարհագրական բարձրագույն ուսումնական հաստատությունները և ֆակուլտետները մտնողները յենթարկվում են լրացուցիչ քննությունների—աշխարհագրությունից:

Շինարարական, ճարտարագիտական և գեղարվեստական բարձրագույն ուսումնական հաստատությունները մտնողները յենթարկվում են լրացուցիչ քննությունների նկարչությունից և գծագրությունից, իսկ կլինեմատագրաֆիայի, ֆիզիկական կուլտուրայի, յերաժշտական և թատերական բարձրագույն դպրոցներ մտնողները յենթարկվում են լրացուցիչ քննությունների ըստ մասնագիտությունի:

3. Քննությունները կատարվում են ԽՍՀՄ Ժողկոմխորհին

կից՝ Բարձրագույն դպրոցների համաժողովենական կոմիտեյի հաստատած ծրագրերով:

Գյուղատնտեսության մեխանիզացիայի, ինժեներա-տնտեսական, անասնաբուժական, զոոտեխնիկական, հիդրոմեխանիկական, անտառատնտեսական ԲՈՒՀ-երն ու ֆակուլտետները մտնողները աշխարհագրությունից լրացուցիչ քննություն չեն թարկվում:

Ուսաց լեզվի և այն լեզվի, վորով տարվում է դասավանդումը տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում, ինչպես և մաթեմատիկայի քննությունները կատարվում են բանավոր և գրավոր, իսկ բոլոր մնացած առարկաներից՝ միայն բանավոր:

Մաթեմատիկայի, ուսաց լեզվի և այն լեզվի գնահատականը, վորով տարվում է դասավանդումը տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում, կատարվում է առանձին՝ գրավոր և բանավոր քննությունների համաձայն և դրվում է յերկու թվանշան:

4. Ընդունելության քննությունները տվող անձանց թվից, այսինքն նրանցից, վորոնք ստացել են «միջակից» վոչ ցածր թվանշան, բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվում են ավելի բարձր թվանշան ստացողները:

Այն անձինք, վորոնք կոնկուրսով չեն ընդունվել այն ֆակուլտետը, վորի համար քննություն են տվել, ընդունվում են այլ ֆակուլտետ, յեթե կան ազատ տեղեր այդ ֆակուլտետի համար քննություն տված թեկնածուներին ընդունելուց հետո, տրվյալ ֆակուլտետի լրացուցիչ քննություններ տալուց հետո:

Ցերկրորդ անգամ քննվել չի թույլատրվում:

5. Միջնակարգ դպրոց (տասնամյակ) ավարտողները, վորոնք ունեն գերազանցիկ ավարտական վկայական, ինչպես նաև 1940 թ. մեծահասակների միջնակարգ դպրոց, բանֆակ ավարտածները, վորոնք բոլոր առարկաներից, բացի գծագրությունից, նկարչությունից և ֆիզիկուլտուրայից, ունեն «գերազանց» թվանշաններ, բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվում են առանց ընդունելության քննությունների:

Այդ իրավունքը տարածվում է նաև միջնակարգ դպրոցն եքստերն կարգով գերազանց ավարտածների վրա և այն անձնավորությունների վրա, վորոնք ավարտել են տեխնիկումը, ուսումնաբանը և բոլոր առարկաներից (բացի գծագրությունից, նկարչությունից և ֆիզիկուլտուրայից) ունեն «գերազանց» թվանշան և մտցված

են յուրաքանչյուր տեխնիկումի շրջանավարտների 50%-ի մեջ և բարձրագույն ուսումնական հաստատությունները մտնում են իրենց մասնագիտությունների գծով, — ընդունվում են առանց ընդունելության քննությունների:

Մանրաբնույթով. 1) Տասնամյակի, տեխնիկումի, ուսումնարանի և բանֆակի գերազանցիկները, — վորոնք առանց ընդունելության քննությունների ԲՈՒՀ-երը մտնելու իրավունք ունեն, — շինարարական, ճարտարապետական և գեղարվեստական բարձրագույն դպրոցները կամ ֆակուլտետներն ընդունվելու դեպքում յենթարկվում են ստուգողական քննությունների նկարչությունից և գծագրությունից, իսկ յերաժշտական և թատերական բարձրագույն դպրոցներն ընդունվողները յենթարկվում են ստուգողների ըստ մասնագիտությունների: Բժշկական միջնակարգ դպրոցը գերազանցիկ ավարտողները յենթարկվում են քննության ընդհանուր կարգով:

6. Բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվելու վերաբերյալ դիմումները տրվում են հունիսի 20-ից մինչև ոգոստոսի 1-ը:

Դիմումի մեջ պետք է նշված լինի, թե դիմողը վո՞ր ֆակուլտետն ու մասնագիտությունն է ընտրել: Դիմումները տրվում են բարձրագույն ուսումնական հաստատության դիրեկտորի անունով, կցելով՝

ա) մանրամասն ինքնակենսագրություն,

բ) վկայական միջնակարգ դպրոցն ավարտելու մասին (իսկականը),

գ) անձնագիր (ներկայացվում է անձամբ),

դ) յերեք հատ լուսանկար, նկարված առանց գլխարկի, ցանկալի յե 3—4 սանտիմետր չափի, դիմողի ստորագրությամբ,

յե) տեղեկանք դիմվորական դրություն մասին (զինապարտաների համար):

7. Դիրեկտորին կից և նրա նախագահությամբ կազմակերպվում է ընդունելության հանձնաժողով հետևյալ կազմով՝ դիրեկտորի տեղակալ ուսումնական մասի գծով, ֆակուլտետի ղեկանները և յերկու պրոֆեսոր: Ընդունելության հանձնաժողովը քննում է ներկայացրած բոլոր դիմումները և կազմում է ընդունելության քննություններին թույլատրված անձանց ցուցակը:

Դիրեկտորն ու ընդունելության հանձնաժողովի անդամները պարտավոր են անձամբ ծանոթանալ յուրաքանչյուր դիմումին:

հետ և անձամբ ստուգել ընդունվողների բոլոր փաստաթղթերը:
Դիմումները ստանալու մոմենտից սկսած հինգ օրվա ընթացքում դիրեկտորը պարտավոր է հայտնել դիմողին՝ թույլատրվում է արդյոք նրան մասնակցել ընդունելության քննություններին, թե՞ վոչ:

Ընդունելության քննություններին չթույլատրելու մասին բողոքներ կարելի չէ տալ համապատասխան ժողովմատ, կամ գերատեսչության ուսումնական հաստատությունների վարչության, կցելով փաստաթղթերը (ինքնակենսագրությունը, ավարտական վկայականի և մերժման պատճառի մասին բարձրագույն ուսումնական հաստատության դիրեկտորի տեղեկացման պատճենները): Ուսումնական հաստատությունների գլխավոր վարչությունը պարտավոր է պատասխանել բողոքին՝ վերջինի ստացվելու մոմենտից վոչ ուշ քան 3 օրվա ընթացքում:

8. Ընդունելության քննությունները տեղի չեն ունենում ոգոստոսի 1-ից մինչև 20-ը, ուսանողների ընդունումը կատարվում է ոգոստոսի 21-ից մինչև 25-ը:

Ծանոթություն.—Այն բարձրագույն ուսումնական հաստատություններում և ֆակուլտետներում, վորտեղ գերազանցիկների դիմումների քանակը գերազանցում է յեղած տեղերի քանակի 50 տոկոսից, դիրեկտորներին թույլտրվում է գերազանցիկների ընդունումը կատարել ոգոստոսի 1-ից մինչև 10-ը, ապահովելով գերազանցիկների համար տեղերի 60 տոկոսը:

10. Ընդունելության քննությունները կատարում են հանձնաժողովները, վորոնց նշանակում է դիրեկտորը:

11. Ընդունելության քննության ամեն մի մասնակցողի հանձնվում է քննական թերթիկ իր լուսանկարով:

12. Ընդունելության քննությունների արդյունքները վորոշվում են առանձին՝ ըստ յուրաքանչյուր առարկայի, գնահատականների (թվանշանների) հետևյալ կարգի գնահատականներով՝ «գերազանց», «լավ», «միջակ», «անբավարար»:

13. Մինչև ընդունելության քննություններն սկսվելը, բարձրագույն ուսումնական հաստատության դիրեկտորը կազմակերպում է բոլոր ընդունվողների բժշկական քննություն:

Հիվանդությունների ցանկը հաստատում է ԽՍՀՄ Առողջկոմատը և Բարձրագույն Դպրոցների գործերի Համամիութենական կոմիտեն:

14. Ընդունելության ստուգման և բժշկական քննության արդյունքները հանձնվում են ընդունող հանձնաժողովին, վորը վորոշում է կայացնում բարձրագույն ուսումնական հաստատության հաշվեգրելու մասին:

Ընդունելությունը բարձրագույն ուսումնական հաստատությունում կատարվում է դիրեկտորի հրամանով:

15. Բարձրագույն ուսումնական հաստատության ընդունված և տարվա սկզբին առանց հարգելի պատճառների պարապմունքի չեկած անձինք հանվում են ուսանողների ցուցակից:

16. Բարձրագույն ուսումնական հաստատության քննությունների դիրեկտորներին թույլատրվում է ազատ տեղեր լինելու դեպքում ընդունել այն անձանց, վորոնք հաջող քննություն են տվել այլ բարձրագույն դպրոցում, բայց չեն ընդունվել ազատ տեղ չլինելու կամ թե իրենց առողջության վիճակով տվյալ մասնագիտության պահանջներին անհամապատասխան լինելու պատճառով: Հաշվի առնելով ուրիշ բարձրագույն դպրոցում քննություն տված առարկաները, ընդունվողը պետք է լրացուցիչ քննություններ տա տվյալ բարձրագույն դպրոցի ընդունելության համար սահմանված առարկաներից: Ուրիշ բարձրագույն դպրոցում քննություն բռնած անձանց համար դիմումներ ներկայացնելու վերջին ժամկետը նշանակվում է սեպտեմբերի 5-ը: Նույն ժամկետը սահմանվում է այն գերազանցիկների համար, վորոնք չեն ընդունվել ուրիշ բարձրագույն դպրոց, ազատ տեղեր չլինելու պատճառով:

17. ԲՈՒՀ չընդունվելու առթիվ բողոքներ կարելի չէ տալ մինչև ուսումնական տարվա սկիզբը՝ համապատասխան ժողովմատ կամ գերատեսչության ուսումնական հաստատության կողմից: Ընդունվության, կցելով փաստաթղթեր (ինքնակենսագրություն, վկայականի պատճեն, քննող և ընդունող հանձնաժողովի արձանագրությունների քաղվածքները):

Ուսումնական հաստատության քննությունների գլխավոր վարչությունը պարտավոր է պատասխանել բողոքին վոչ ուշ քան 3 օր հետո՝ բողոքը ստանալու մոմենտից:

18. Քննություններին չթույլատրված և իրենց ցանկությամբ չմասնակցած կամ քննությունները չբռնած անձանց, սակայն ազատ տեղեր չլինելու կամ առողջական վիճակի պատճառով չընդունված անձանց ներկայացրած փաստաթղթերը վերադարձվում են նրանցից հա-

մապատասխան դիմում ստացվելուց չկամ ընդունող հանձնաժողովի կողմից մերժելու մասին վորոշում կայացնելուց հետո, վոչ ուշ քան 2 որվա ընթացքում:

ԽՍՀՄ Ժողովրդական կից Բարձրագույն
Դպրոցների գործերի Համաժողովրդական
Կոմիտեյի նախագահ՝ Ա. ԿԱՅՏԱՆՈՎ

1940—41 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐԴՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բարձրագույն ուսումնական հաստատությունն ընդունվողներից պահանջվում են գիտելիքներ հետևյալ ծավալով.

1. ԽՍՀՄ Ժողովուրդների պատմության համառոտ դասընթացը—պրոֆեսոր Շեստակովի խմբագրությամբ:

2. ԽՍՀՄ Սահմանադրությունը:

3. Ընկեր Ստալինի հաշվետու զեկուցումը կուսակցության 18-րդ համագումարում:

4. Ընկ. Մոլոտովի զեկուցումը 18-րդ համագումարում «ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման յերրորդ հնգամյա պլանը» (1938—1942):

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԾՐԱԳԻՐ

1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Հնչյունաբանություն

1. Հայերեն գրական լեզվի հնչյունաբանական սխեման, հնչյուններ և տառեր, հայերենի այբուբենը (կարգով):
2. Բառ, վանկ և տողադարձ:
3. Հայերենի հնչյունափոխություններ:

Բ. Բառը յեվ նրա կազմությունը

1. Բառի ուղղակի և փոխաբերական իմաստները, նույնա- նիշ, հակառակ, համանիշ, և նույնանուն բառեր:
2. Հասկացողություն բառի, արմատի, ածանցի, հիմքի և վերջավորության մասին:
3. Արմատի և ածանցի, նախածանցի և վերջածանցի նշա- նակությունը բառակազմության մեջ: Հնչյունափոխության դեպ- քերը բառակազմության ժամանակ: Բառակազմության յեղանակ- ները հայերենում, պարզ, բարդ, ածանցավոր և բարդ ածանցա- վոր բառեր: Իսկական և անիսկական բարդություններ: Հարա- ղերներ և կցական բարդություններ: Հոդակապով և անհոդակապ բարդություններ:

Գ. Ուղղագրություն

1. Ձայնավորի ուղղագրությունը:
2. Այ, ույ, յե, յո, յու յերկհնչյունների ուղղագրությունը. իա, իո, իու, իե յերկհնչյունների (յերկձայնավորների) ուղղա- գրությունը: Յ ձայնակապը և նրա ուղղագրությունը:
3. Բաղաձայների ուղղագրությունը: Ոտար բառերի ուղ- ղագրությունը:

2. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ. Խոսքի մասեր

Բառերի կլասիֆիկացիան. գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, և ձայնարկություն:

1. Բայ

Բայի գործածությունը նախադասության մեջ, վորպես ստո- րոգյալ, յենթակա և լրացում:

Բայի բաժանումն ըստ յերկու հիմնական ձևերի՝ դերբայա- կան և յեղանակային:

Ա. Բայի դերբայական ձևեր, կամ դերբայներ

Անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար, ըղձական և յենթակայական դերբայներ: Դերբայների իմաստն ու գործածությունը խոսքի մեջ: Անորոշ դերբայի վերջավո- րությունը և խոնարհումները: Անկատար, ապառնի, վաղակատար հարակատար և ըղձական դերբայների դերը խոնարհման մեջ:

Բ. Բայի յեղանակային ձևեր

Դեմք, թիվ և ժամանակ:

Մահմանական, հրամայական և ըղձական. պայմանական կամ յենթադրական և հարկադրական յեղանակներ: Ոժանդակ բայը և նրա խոնարհումը: Մահմանական յեղանակի կազմությունը, սահ- մանական յեղանակի ժամանակները. ապառնի ժամանակի կազմու- թյունը և ուղղագրությունը, հրամայական յեղանակի կազմու- թյունը և ուղղագրությունը, ըղձական յեղանակի կազմու- թյունը և ժամանակները:

Պայմանական (յենթադրական) յեղանակի կազմությունը և ժամանակները: Հարկադրական յեղանակի կազմությունը, ժամա- նակները և պիտի յեղանակիչը: Բայի սեռերը՝ ներգործական, չե- ղոք և կրավորական: Բայերի կազմությունը, բայերի կերպերն ըստ կազմության՝ սոսկական, կրավորական, պատճառական և բաղմապատկական:

Կերպավորող ածանցներ՝ ացն, եցն, ցն, վ, ատ, ոտ և այլն:

Անալ և ենալ վերջավորություն ունեցող բայերի խոնար- հումը: Անկանոն բայեր՝ լալ, գալ, տալ, լինել, անել, ուտել, դառնալ, տանել, առնել, տեսնել:

Ն. և Զ. սոսկածանց ունեցող բայերի խոնարհումը:

Յերկրորդական բաղադրյալ ժամանակներ: Խոսքի մեջ բայի յեղանակային տարբեր ձևերի ու ժամանակների փոխադարձ փոխարինումները: Բայերի ժխտական խոնարհումը և ուղղագրութունը, արգելական ձևի առանձնահատկութիւնը. մի արգելականը և մի մեղմականը:

Գոյական. — Առարկաներ. գոյականներ: Գոյականների գործածութիւնը վորպես յենթակա, վորպես կոչական բառ, վորպես ստորոգյալ և վորպես լրացում: Գոյականների թիւը, գոյականների հոլովումը. հայերենի հոլովները՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական. դրանց ձևական և իմաստային նշանակութիւնները: Հոլովում և հոլովիչները (ի, ու, ան, յան, ոջ, որ, վա, ց): Այլաձև հոլովումներ, հարադիր գոյական անունների հոլովում, գրաբար հոլովումների մնացորդները, հոգեբ (ստացական, ցուցական, դիմորոշ և վորոշող): Անեղակի և անհոգնակի հոլովում: Գոյականակերպ ածանցներ:

Ածական. — Ածականների վորոշումը (սահմանում), վորպես հատկութիւն և վերաբերութիւն ցույց տվող բառերի: Ածականների գործածութիւնը նախադասութիւն մեջ, վորպես լրացում, վորպես ստորոգյալ, ածականների գործածութիւնը գոյականաբար:

Ածականների ստորաբաժանումն ըստ իմաստի՝ վորակական (գեղեցիկ), հարաբերական (փայտյա). համեմատութիւն աստիճաններ, ածականների գործածութիւնը գոյականների հետ: Ածականների հոլովումը: Ածականների փոխանցումը գոյականի և ընդհակառակը. ածականակերտ վերջածանցներ և ածականակերտ բացասական նախածանցներ:

Թվական. — Թվականները վորպես առարկայի քանակ և կարգ ցույց տվող բառեր. Թվականի գործածութիւնը նախադասութիւն մեջ: Թվականի տեսակները (քանակական և դասական). քանակական Թվականները և նրանց ուղղագրութիւնը. դասական Թվականների գրավոր արտահայտութիւն յերեք ձևերը:

1. Հռոմեական, 2. արաբական Թվանշաններով և 3. հայերեն տառերով. ուղղագրութիւն: Թվականների գործածութիւնը գոյականների հետ, Թվականների հոլովման դեպքը և ուղղագրութիւնը: Գոյականների գործածութիւնը Թվականով:

Դերանուն. — Դերանունները վորպես փոխարինող բառեր. դերանունների գործածութիւնը նախադասութիւն մեջ: Գոյականա-

նի, ածականի, Թվականի, մակբայի, յերբեմն և ամբողջ խոսքի փոխարինումը դերանուններով: Դերանունների տեսակները ըստ իմաստի՝ անձնական, ցուցական, ստացական, փոխադարձ, հարցական, հարաբերական—անորոշ, վորոշյալ և ժխտական: Դերանունների հոլովումը: Անեղակի հոլովում, անհոգնակի հոլովում. ուղղագրութիւն:

Մակբայ. — Մակբայի վորոշումը: Մակբայների տեսակներն ըստ իմաստի: Տեղ, ժամանակ, ձև և քանակ ցույց տվող մակբայներ: Մակբայական ածանցներ: Մակբայների գործածութիւնը նախադասութիւն մեջ. մակբայի և ածականի փոխանցումը խոսքի մեջ:

Կապեր. — Կապերի սահմանումը, կապերի գործածութիւնը նախադասութիւն մեջ, կապերի տեսակները, նախադրութիւններ (նաև նախդիրներ) և հետադրութիւններ. Թվական և անիսկական կապեր, կապական բառեր:

Շաղկապ. — Շաղկապներ և նրանց գործածութիւնը նախադասութիւն մեջ, շաղկապների տեսակները. համադասական և ստորադասական, ուղղագրութիւն. պարզ և բաղադրյալ շաղկապներ:

Չայնարկութիւններ. — Չայնարկութիւնը և նրա առանձնահատկութիւնները խոսքի մյուս մասերի համեմատութիւն (եռոցիոնալ բնութիւն). Չայնարկութիւնների գործածութիւնը խոսքի մեջ, կետադրութիւն, մի շարք Չայնարկութիւնների ծագումը:

Շ Ա Ր Ա Հ Յ Ո Ւ Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ա. Պարզ նախադասութիւն շարահյուսութիւն

1. Մտածողութիւն և լեզու, մտածողութիւն և խոսք:

2. Նախադասութիւնը և նրա հիմնական հատկանիշները՝

ա) արտահայտում ե մի ամբողջական միտք.

բ) խոսքի միավորն ե և այլն:

Նախադասութիւն տեսակներն ըստ կազմութիւն՝ պարզ և բարդ:

Պարզ նախադասութիւն կազմութիւնը (պարզ-համառոտ և պարզ-ընդարձակ): Գլխավոր անդամներ՝ յենթակա և ստորոգյալ: Դրանց միասնութիւնը և հակադրութիւնը: Ստորոգյալի լրացումները և նրանց տեսակները՝ խնդիր և պարագա. խնդիրներ տեսակները՝ ուղղակի և անուղղակի. պարագաների տեսակները:

Յենթակայի լրացումներ՝ վորոշիչ, հատկացուցիչ և բացահայտիչ: Լրացման լրացումներ: Հոլովների կիրառությունը: Ուղղական հոլովով գրվող բառերը: Սեռական հոլովի հիմնական ֆունկցիան: Տրական հոլովի հիմնական ֆունկցիան, տրական հոլովի յերկրորդական ֆունկցիաները: Հայցական հոլով: Հայցական հոլովի հիմնական ֆունկցիան: Հայցական հոլովի ձևի առանձնահատկությունը մյուս հոլովների համեմատությամբ, հայցական հոլովի յերկրորդական ֆունկցիաները: Գործիական և բացառական հոլովների հիմնական և յերկրորդական ֆունկցիաները: Ներգոյական հոլովը յեվ նրա հիմնական ֆունկցիան: Հոլովների փոխադարձ ֆունկցիոնալ փոխարինումները:

4. Նախադասության տեսակներն ըստ յերանգի՝ հարցական, բացականչական կամ կոչական (դիմողական) և պատմողական. նախադասություն տեսակներն ըստ բնույթի՝ հաստատական և ժխտական: Միջանկյալ բառերով, կոչականով և ձայնարկություններով նախադասություններ:

Համադաս լրացումներով նախադասություններ: Կետադրությունը համադաս լրացումներով նախադասության մեջ:

Կետադրությունը պարզ նախադասության մեջ. զեղջված անդամով նախադասություն, անենթակա նախադասություն, անորոշ նախադասություն:

Բ. Բարդ նախադասություն օտոտիյունություն.

1. Բարդ նախադասության կառուցվածքը, բարդ նախադասության տեսակները՝ միավորյալ, համադասական և ստորադասական: Համադասական շաղկապների գործածությունը միավորյալ և համադասական նախադասությունների մեջ:

2. Բարդ ստորադասական նախադասության մասերի իմաստային փոխհարաբերությունները (պատճառաբանություն, միաժամանակություն, հաջորդականություն, հակադրություն, պայմանականություն և այլն): Այդ հարաբերության լեզվական արտահայտությունները, կետադրություն:

3. Բարդ ստորադասական նախադասության կառուցվածքը. զլխավոր և յերկրորդական կամ ստորադաս նախադասություններ: Յերկրորդական նախադասության ստորադասության աստիճանները, համադաս նախադասություններ:

4. Ստորադաս նախադասության տեսակներն ըստ լրացական իմաստի (յենթակայական, ստորոգելիական, պարագայական

և այլն): Կետադրությունը բարդ նախադասությունների մեջ. ուղղակի խոսքով նախադասություն. միջանկյալ նախադասություն ունեցող նախադասություն: Դերբայական յեվ կողմնակի լրացումներ, կողմնակի յենթակա: Բարդ նախադասությունը դերբայական լրացումներ և կողմնակի յենթակա ունեցող պարզ նախադասությամբ փոխարինելու յեղանակները: Խառը տիպի նախադասություններ: Ուղղակի և անուղղակի խոսք:

2. Ը ն ք ե ր ց ա ն ու ր յ ու ն

Մահուն, գեղեցիկ, անսխալ և արտահայտիչ ընթերցանություն, գեղարվեստական ընթերցանություն:

3. Գ ր ա մ օ ր յ ե վ բ ա ն ա մ օ ր խ օ ֆ

Շարադրություն ազատ թեմայի շուրջը: Շարադրություն առաջադրված թեմայի շուրջը: Թելադրություն:

Կանոնավոր գրական լեզվով խոսելու յեվ պատմելու հմտություն: Գեղեցիկ վոճական միջոցների ոգտագործումը խոսելու ժամանակ. բառապաշարի հարստություն:

Գ ր Ա Կ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

1. Ա. Ղարիբյան.—Ձեկաբանություն: 1938 կամ 1939 թվի հրատարակություն:

3. Գ. Սեվակ.—Շարահյուսություն, 1938 կամ 1939 թվի հրատարակություն:

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Բարձրագույն դպրոցներ ընդունվելու համար քննվողից պահանջվող մի-ն իմում գրականության ցուցակ):

1. Խ. Աբովյան.—«Վերջ Հայաստանի»: 2. Մ. Նալբանդյան.—«Յերկրագործությունը վերադառնում է ճանապարհին»: 3. Պ. Պառույան.—«Հացի խընդիր», «Յեցեր»: 4. Ղ. Սպարյան.—«Յերկու քույր», «Տորք անգեղ»: 5. Բաճեճի.—«Վասիկ Աբաղադ»: 6. Գ. Սուքոուկյան.—«Գեպո», «Խաթաբալա»: 7. Հ. Հովհաննիսյան.—«Բանաստեղծություններ»: 8. Մուրացյան.—«Նոյի ագոստի», «Առաքյալը»: 9. Շիրվանզադե.—«Նամուս», «Բառ», «Արսեն Դիմաքսյան»: 10. Նար-Դոս.—«Մպանված աղավին», «Մահը»: 11. Ա. Իսահակյան.—«Բանաստեղծություններ»: 12. Հ. Թումանյան.—«Գեղարվեստական յերկեր»: 13. Ա. Ծառուցյան.—«Բանաստեղծություններ»: 14. Հ. Հակոբյան.—«Բանաստեղծություններ»: 15. Շ. Կուրդիբյան.—«Արշալույսի զոդանջներ»:

16. 4. Պարոնյան.—«Մեծագույնի մուրացիկներ»։ 17. Պ. Դուրյան.—«Բանաստեղծություններ»։ 18. Վ. Փափազյան.—«Գյուղից»։ 19. Դ. Դեմիրճյան.—«Խաչիկ», «Նիգյար»։ 20. Ն. Զարյան.—«Ռուշանի քարափը», «Ստալին», «Հացավան»։ 21. Ս. Զորյան.—«Մի կյանքի պատմություն»։ 22. Ս. Կազարյան.—«Պատմվածքներ»։ 23. Սիրառ.—«Զգրված որհրեք», «Մամեն ու Աշեն»։ 24. Դ. Սարյան.—«Միջոց»։

ПРОГРАММА ПО РУССКОМУ ЯЗЫКУ

1. Отделы науки о языке: синтаксис, фонетика, морфология.

2. Понятие о предложении. Состав предложений: главные и второстепенные члены в предложении. Виды второстепенных членов предложения: определение, дополнение, обстоятельство (места, времени, цели, причины, образа действия). Виды предложений по составу: личные, безличные, назывные, полные, неполные; распространенные, нераспространенные.

Предложения повествовательные, вопросительные, восклицательные. Предложения с однородными членами. Приложение. Понятие об обособлении. Обособленные члены предложений: прилагательные, причастия, деепричастия и приложения. Вводные слова. Обращения. Пунктуация в простом предложении. Сложные предложения.

Сложно-сочиненные предложения. Типы связей при сочинении. Пунктуация.

Сложно-подчиненные предложения: главные и придаточные. Способы подчинения предложений. Сложно-подчиненные предложения с несколькими придаточными предложениями. Прямая и косвенная речь. Пунктуация.

3. Предложение и слово. Слово и слог. Ударение в русском языке. Слог и звук. Звук и буква. Звуковой состав русского языка. Гласные и согласные. Твердые и мягкие согласные. Обозначение мягкости согласных в русском языке на письме. Звонкие и глухие согласные и их правописание. Безударные гласные и их правописание. Перенос слов.

4. Морфологический состав слов: корень, суффикс, приставка (префикс), флексия; основа слова (непроизводная и производная). Чередование гласных и согласных в корнях. Правописание приставок.

5. Имя существительное. Роль в предложении. Род, число, падеж. Склонение существительных. Типы склонений. Суффиксы и их значение. Правописание существительных.

6. Имя прилагательное. Роль в предложении. Переход прилагательного в существительное. Прилагательные качественные, относительные. Краткая и полная форма прилагательных и их различная роль в предложении современного языка. Склонение прилагательных. Особенности склонения относительных прилагательных на „ий“ (лисий) и на „ов“, „ин“ (отцов, дядин). Суффиксы прилагательных. Степени сравнения прилагательных. Правописание прилагательных.

7. Числительное. Значение числительных. Числительные количественные, порядковые, дробные и собирательные. Связь числительных с существительными. Правописание числительных. Склонение сложных числительных количественных и порядковых.

8. Местоимение. Понятие о местоимении. Их разряды. Склонение местоимений и их правописание.

9. Глагол. Значение и изменяемость глагола, его роль в предложении. Неопределенная форма глагола. Личные глаголы. Переходные и непереходные глаголы. Наклонение. Число. Лицо. Время. Вид. Возвратная форма глагола. Два типа спряжения. Правописание глагольных форм. Причастие. Страдательные и действительные причастия. Время причастий. Склонение причастий. Правописание причастий. Деепричастие. Виды деепричастий и их значение. Образование причастий и деепричастий и их правописание.

10. Наречие. Его значение и роль в предложении. Виды наречий по значению. Образование наречий. Степени сравнения наречий. Переход других частей в наречия и переход наречий в предлоги и союзы. Правописание наречий.

11. Предлог. Значение и употребление предлогов. Правописание предлогов.

12. Союз. Значение и употребление союзов. Их правописание. Частицы. Их значение. Правописание отрицательных частиц: „не“ и „ни“.

13. Понятие о междометиях.

ПРОГРАММА ПО ЛИТЕРАТУРЕ

Общие указания.

1. Испытуемый должен обнаружить знакомство с крупнейшими произведениями классической и современной художественной литературы, а также с важнейшими научно-критическими произведениями, по крайней мере в объеме приводимого ниже перечня литературных произведений.

2. Испытуемый при разборе литературного произведения должен обнаружить знакомство с основами теории литературы, понимание художественного значения данного произведения, его общественное значение в наше время, а также четкое знание темы и идей произведения, персонажей произведения и их взаимоотношений, взглядов автора в связи с общественно-политической обстановкой эпохи и основных моментов его биографии.

Испытуемый должен иметь следующий круг сведений по теории литературы: тема, идея, план произведения, фабула, сюжет, эпитет, сравнение, тропы, ритм, стих, рифма; стихотворные размеры: эпос, лирика, рассказ, повесть, поэма, роман, сказка, очерк, драматические произведения.

Отдельного испытания по теории литературы не производится; знания по теории литературы выясняются при разборе литературных произведений.

А. Ф о л ь к л о р.

Песни: 1) о крепостном праве („Как за барином житье было привольное“).

2) разбойничьи („Не шуми, мати, зеленая дубравушка“).
Былины: Василий Буслаевич, Илья Муромец.

Б. Список литературных произведений

А. Пушкин: Прилог к поеме „Руслан и Людмила“, „Скупой Рыцарь“, „Борис Годунов“, „Медный Всадник“, „Полтава“, „Евгений Онегин“, „Дубровский“, „Капитанская дочка“.

Стихотворения: „Деревня“, „Послание в Сибирь“, „К Чаа-
31

даеву“, „Моя родословная“, „Туча“, „Памятник“, „Узник“, „Бесы“, „Осень“, „Вновь я посетил тот уголок земли“, „Песнь о вешем Олеге“, „Вольность“.

Лермонтов: „Герой нашего времени“, „Дума“, „На смерть поэта“, „Прощай немытая Россия“.

Гоголь: „Ревизор“, „Мертвые души“.

Гончаров: „Обломов“.

Тургенев: „Записки охотника“, „Отцы и дети“.

Островский: „Гроза“, „Свои люди—сочтемся“.

Некрасов: „Кому на Руси жить хорошо“, „Железная дорога“, „Размышление у парадного подъезда“, „Арина—мать солдатская“.

Салтыков-Щедрин: „День в помещичьей усадьбе“, из „Пошехонской старины“, „Господа Головлевы“; сказки (по выбору).

Л. Толстой: „Анна Каренина“, „Хаджи Мурад“.

Ленин: Лев Толстой, как зеркало русской революции. Толстой и его эпоха.

Чехов: „Человек в футляре“, „Вишневый сад“, „Злоумышленник“.

М. Горький: „Челкаш“, „Песнь о буреизвестнике“, „Песнь о соколе“, „Мать“, „Дело Артамоновых“.

Фурманов: „Чапаев“.

Фадеев: „Разгром“.

Шолохов: „Поднятая целина“.

Маяковский: „Левый марш“, „Во весь голос“, „Товарищ Нетте“, „Хорошо“.

Н. Островский: „Как закалялась сталь“.

Шевченко: „Сон“, „Завещание“.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

1. Թվաբանություն

1. Կայուն ունակություններ ամբողջ և կոտորակային թվերի վրա կատարվող գործողություններում:
2. Թվերի՝ 2-ի, 3-ի, 4-ի, 5-ի, 9-ի և 25-ի բաժանելիության հատկանիշները: Թվերի վերածումը պարզ բազմապատկիչների, ամենափոքր բազմապատկիչ և ամենամեծ ընդհանուր բաժանարար գտնելը:
3. Հասարակ կոտորակների վերածումը տասնորդական կոտորակների և ընդհանրացումը: Պարբերական տասնորդական կոտորակներ:
4. Չափերի մետրական սխեմներ:
5. Գնորդական հարաբերություն և քանորդական համեմատություն: Գնորդական համեմատություն հիմնական հատկություններ: Մեծությունների ուղիղ և հակադարձ համեմատականություններ: Գաղափար միջին թվաբանականի և միջին յերկրաչափականի մասին: Համեմատական բաժանում:
6. Տոկոսները հաշվարկելու վերաբերյալ հիմնական խնդիրներ:

2. Հանրահաճիվ

1. Հանրահաշվական սիմվոլիկայի ճշգրիտ և գիտակցական ոգտագործումը, հանրահաշվական բանաձևերի ընթերցումը, նրանց կազմումը կոնկրետ առաջադրությունների հիման վրա և թվական արժեքները գտնելը: Գործողությունների կարգը:
2. Գործողություններ հարաբերական թվերի նկատմամբ և նրանց հիմնական հատկությունները: Թվային առանցք:
3. Միանդամների և բազմանդամների գումարումը, հանումը, բազմապատկումը և բաժանումը:
4. Հանրահաշվական արտահայտությունների կրճատ բազմապատկումն ու բաժանումն ըստ հետևյալ բանաձևերի՝
 $(a \pm b)^2$; $(a \pm b)^3$; $a^2 - b^2$; $a^2 \pm b^2$; $a^3 \pm b^3$; $a^n \pm b^n$, յերբ n -ը ամբողջ է և զրական:

(x-a)-ի վրա ամբողջ բազմանդամի բաժանելիության թեո-
րեմը (Բեզուի թեորեմ):

5. Բազմապատկիչները վերլուծելու պարզագույն դեպքեր՝
ա) ընդհանուր բազմապատկիչը փակագծից դուրս բերելը,
բ) կրճատ բազմապատկման բանաձևերից ոգտվելը և
գ) խմբավորումների մեթոդը:

6. Հանրահաշվական կոտորակների ձևափոխումները և գոր-
ծողությունները նրանց հետ:

7. Հավասարության յերկու տեսքը՝ նույնություն և հավա-
սարում: Հավասարումների հիմնական հատկությունները: Մեկ
անհայտով առաջին աստիճանի հավասարումներ կազմելն ու
լուծելը:

8. Յերկու և յերեք անհայտով առաջին աստիճանի հավա-
սարումների սխտեմ կազմելն ու լուծելը: Յերկու անհայտով յեր-
կու հավասարումների սխտեմի հետադոտումը: Հավասարումների
սխտեմի հանգվող խնդիրների լուծումը:

9. Անհավասարությունների ընդհանուր հատկությունները,
1-ին աստիճանի անհավասարությունների լուծումը և առաջին
աստիճանի անհավասարությունների սխտեմը:

10. Գաղափար ֆունկցիայի մասին, փոփոխական և հաս-
տատուն մեծություններ, կախյալ և անկախ փոփոխական մեծու-
թյուններ:

Գաղափար հարթության կետի կոորդինատների մասին:
Ուղիղ և հակադարձ համեմատական կապակցության կախյալ
մեծությունների գրաֆիկ պատկերացումը:

$y=kx+b$; $y=ax^2$; $y=ax^2+bx+c$ հավասարումների գրա-
ֆիկները:

11. Արտադրյալը, աստիճանը և կոտորակն աստիճան բարձ-
րացնելը:

12. Արմատ հանելը: Ամբողջ թվերից, հասարակ և տասնոր-
դական կոտորակներից քառակուսի արմատ հանելը: 0,1, 0,01, և
այլ ճշտություն մոտավոր արմատ հանելը:

Նշանների կանոնն արմատ հանելիս:

13. Արտադրյալից, կոտորակից և աստիճանից վորևև աս-
տիճանի արմատ հանելը:

Գաղափար իրացիոնալ թվի մասին:

Գործողություններ արմատների նկատմամբ:

Կոտորակները հայտարարի իրացիոնալից աղատելը:

14. Մեկ անհայտով 2-րդ աստիճանի հավասարում կազմելը
և լուծելը: Քառակուսի հավասարման գործակիցների և արմատ-
ների կապակցությունը: Քառակուսի հավասարման արմատների
հետադոտությունը: 2-րդ աստիճանի յեռանդամի վերլուծումը բազ-
մապատկիչների:

15. Յերկուքառակուսի (բիկվադրատ) հավասարումներ: Ար-
մատանշանի տակ անհայտ պարունակող հավասարումներ: Բարձր
աստիճանի հավասարումներ՝ յերկանդամ, յեռանդամ, հետադարձ
3-րդ և 4-րդ աստիճանի:

Յերկու անհայտով 2-րդ աստիճանի հավասարումների սխ-
տեմներ կազմելը և լուծելը:

16. Կոմպլեքս թվեր և գործողություններ նրանցով, կոմպ-
լեքս թվի յեռանկյունաչափական ձևը:

17. Թվաբանական պրոգրեսիա: Թվաբանական պրոգրեսիայի
վորևև անդամի և նրա անդամների գումարի հաշվումը:

18. Յերկրաչափական պրոգրեսիա: Յերկրաչափական պրո-
գրեսիայի վորևև անդամի և նրա անդամների գումարի հաշվումը:
Անվերջ յերկրաչափական պրոգրեսիա: Անվերջ նվազող յերկրա-
չափական պրոգրեսիայի անդամների գումարի հաշվումը:

19. Յուցիչի հասկացողության ընդհանրացումը, դերո, բա-
ցասական և կոտորակային ցուցանիշներով աստիճան: Գործողու-
թյուններ կամավոր ցուցիչներով աստիճանների հետ:

20. Գաղափար լոգարիթմի մասին: Լոգարիթմների ընդհա-
նուր հատկություններ: Լոգարիթմական ֆունկցիաների գրա-
ֆիկը:

21. Արտադրյալի, քանորդի, աստիճանի և արմատի լոգա-
րիթմները: Արտահայտություններ լոգարիթմներ: Պոտենցիալը:
Լոգարիթմների մի սխտեմից մյուսին անցնելու մոդուլը:

22. Տասնորդական լոգարիթմների հատկությունները: Լո-
գարիթմների աղյուսակների ոգնություն հաշվելը (4 կամ 5
նիշնոց):

23. Յուցչային և լոգարիթմական հավասարումների լուծելը:
Բարդ տոկոսների հաշվումը:

24. Միացությունների ձևերը՝ կարգավորություններ, տեղա-
փոխություններ և զուգադրություններ: Կարգավորությունների
տեղափոխությունների և զուգադրումների թիվ արտահայտող
բանաձևերի արտածումը: $C_m^n = C_m^{m-n}$ հավասարության ապա-
ցուցումը:

25. Յերկրորդ անդամներով տարբերվող բինոմների (յերկ-
անդամների) արտադրյալին վերաբերող բանաձևերի արտածումը:
Գաղափար լիակատար մաթեմատիկական ինդուկցիայի
մեթոդի մասին: Նյութոնի բինոմի բանաձևի արտածումն ամ-
բողջ և դրական ցուցիչի համար: Ընդհանուր անդամի բանաձևը:
 $(n+a)^n$ -ի վերլուծման անդամների և գործակիցների հատ-
կությունները:

3. Յերկրաչափություն

1. Ուղիղ, ճառագայթ, հատված: Ուղիղ գծի հատվածների
գումարն ու տարբերությունը, գաղափար անկյան մասին, ան-
կյունների գումարն ու տարբերությունը, ուղիղ և կից ան-
կյունների հատկությունը: Ուղղաձիգ անկյունների հատկությունը:
2. Յեռանկյուն (ներա միջնագծերը, բարձրությունները և
կիսորդները): Յեռանկյունների տեսակները:
3. Հավասարասրուն յեռանկյան հատկությունները:
Յեռանկյունների հավասարությունների յերեք դեպքերը:
Յեռանկյան արտաքին անկյան թեորեմը:
4. Կախում յեռանկյան կողմերի և անկյունների միջև:
Ուղղահայացների և թեքերի հատկությունը: Ուղղանկյուն
յեռանկյունների հավասարությունը:
5. Գաղափար կետերի յերկրաչափական տեղի մասին: Ուղի-
ղի հատվածի միջուղահայացի (միջակետում կանգնեցրած ուղ-
ղահայացի) և անկյան կիսորդի հատկությունները:
6. Կառուցման հիմնական խնդիրները.—
ա) ուղիղի տվյալ կետում կառուցել տված անկյան հավա-
սար անկյուն,
բ) տված անկյունը կիսել,
գ) տված հատվածը կիսել,
դ) ուղիղի տված կետում ուղղահայաց կանգնեցնել,
յե) տված կետից ուղիղին ուղղահայաց իջեցնել,
զ) կառուցել յեռանկյուն, յերբ տրված են 3 կողմերը, մի
կողմը և յերկու անկյունները, յերկու կողմերն ու նրանցով կազ-
մած անկյունը:
7. Զուգահեռ ուղիղներ: Զուգահեռ ուղիղների աքսիոման:
Յերկու ուղիղների զուգահեռության պայմանները: Ուղիղից դուրս
վորեն կետից այդ ուղիղին զուգահեռ անցկացնելը:

8. Զուգահեռ և ուղղահայաց կողմեր ունեցող անկյունների
հատկությունները:

Յեռանկյան և բազմանկյան անկյունների գումարը:

Զուգահեռագիծ և սեղան: Զուգահեռագծի կողմերի և անկ-
յունների հատկությունները: Զուգահեռագծի, ուղղանկյան, շե-
ղանկյան և քառակուսու անկյունագծերի հատկությունները:

10. Յեռանկյան և սեղանի միջին գծի հատկությունները:
Հատվածի բաժանումը մի քանի հավասար մասերի:

11. Շրջագիծ, կենտրոն, տրամագիծ, շառավիղ: Կենտրոնա-
կան անկյուններ, աղեղներ և նրանց ձգող լարերը: Շոշափողներ,
շոշափման կետից անցկացրած շառավիղի հատկությունները:
Յեռանկյան ներգծյալ շրջանի նրան արտագծյալ շրջանի կենտ-
րոնը:

12. Կենտրոնական, ներգծյալ, լարով ու շոշափողով կազմված
արտագծյալ և շրջանի ներսում կամ նրանից դուրս գազաթներ
ունեցող անկյունների չափումը: Արտաքին կետից շրջանագծին
շոշափող տանելը:

13. Գաղափար համաչափելի և անհամաչափելի հատված-
ների մասին. համեմատական հատվածներ՝ անկյան կողմերը
հատող զուգահեռ ուղիղների հատկությունները. հատվածի բաժա-
նումը տված հատվածների համեմատական մասերի: Տրված յե-
րեք հատվածներին 4-րդ համեմատական հատվածի կառուցումը:

14. Յեռանկյունների և բազմանկյունների նմանությունը:
Տված յեռանկյան և բազմանկյան նման յեռանկյուն և բազման-
կյուն կառուցելը: Յեռանկյունների նմանության թեորեմները:
Թեորեմ յեռանկյան ներքին անկյան կիսորդի հատկության
մասին:

15. Չափական առնչություններ ուղղանկյուն-յեռանկյան
մեջ: Ուղիղ անկյան գազաթից ներքնաձիգին իջեցրած ուղղահա-
յացի հատկությունները: Պյութագորի թեորեմը: Յեռանկյան սուր
և բութ անկյան դիմացի կողմի քառակուսին: Համեմատական
հատվածներ շրջանի մեջ: $x = \sqrt{a^2 + b^2}$; $a = \frac{ab}{c}$; $x = \frac{a^2}{c}$; $x = \sqrt{ab}$
